

Լեոնային Ղարաբաղը և Շվեյցարիայի դերը

Լեոնային Ղարաբաղի դեմ ադրբեջանա-թուրքական դաշինքի կողմից մղված պատերազմը արտերկրում նկատելիորեն զուսպ արձագանքներ է առաջ բերում: Դրանք միակողմանիորեն պայմանավորված են տնտեսական նկատառումներով: Շվեյցարիան նույնպես սխալ առաջնահերթություններ է ընտրել: Հյուր մեկնաբանը Ֆիլիպ Էգերն է:

Լեոնային Ղարաբաղի կամ ինչպես այդ՝ միջազգայնորեն չճանաչված հանրապետությունն իրեն անվանում է, Արցախի հակամարտության շուրջ տեղեկատվությունը և մեկնաբանությունները մեծապես կրում են ադրբեջանա-թուրքական քարոզչության ազդեցությունը: Այն իր մեկնաբանողական ինքնիշխանությունն իրականացնում է՝ հնչեցնելով սպառնալիքներ այն անձանց հասցեին, որոնք կասկածի տակ են դնում Ադրբեջանի տարածքային պահանջները հայկական այդ բնօրրանի նկատմամբ: Զինանոցին պատկանում են նաև մամուլի ազատության դեմ կատարվող հարձակումները: Լրագրողներն ահաբեկվում են և ընդգրկվում «սև» ցուցակներում: «Ադրբեջանը հարձակվում է շվեյցարացի լրագրողների վրա», - տեղեկացնում էր «NZZ am Sonntag»-ը 2019 թ. վերջին: Գերիշխանության և սպառնալիքների համադրությունը լրատվամիջոցներում ազդեցիկ է, իսկ քաղաքականության դիրքորոշումը միակողմանիորեն թելադրված է տնտեսական նկատառումներով:

Ադրբեջանը Հարավային Կովկասում Շվեյցարիայի ամենակարևոր առևտրային գործընկերն է և նավթի խոշոր մատակարարը: Շվեյցարիայի Արտաքին գերատեսչությունն (ԱԳ) իր կայքում գովաբանում է երկկողմ հարաբերություններն ու նշում, որ Շվեյցարիան մեծ նշանակություն է տալիս Ադրբեջանում «լավ կառավարմանը խթանելուն»: Փաստացիորեն այս առումով շատ բան կա անելու. Ադրբեջանը կոռումպացված ժառանգական բռնապետություն է, որը ոտնակոխ է անում քաղաքացու և մարդու իրավունքները: Ամերիկյան հայտնի «Think-Tank Freedom House»-ն Ադրբեջանին հատկացնում է ժողովրդավարության 100 միավորից 10-ը, իսկ

Թուրքիային՝ ամոթալի 32 միավոր, և այս ցուցանիշներում կա անկման միտում: Հետևաբար, այդ երկու երկրներն էլ պատկանում են «ոչ ազատ» («not free») երկրների շարքին՝ ի տարբերություն Հայաստանի (53) և Արցախի (34), որոնք, իբրև անցումային ժողովրդավարական երկրներ, բնութագրվում են՝ որպես «մասամբ ազատ» («partly free»), և այս ցուցանիշները բարձրանալու միտում ունեն:

Որպես տեխնիկական և տնտեսական լավ համագործակցության հայտնի օրինակ՝ Շվեյցարիայի ԱԳ-ն մատնանշում է Ադրբեջանի պետական «Socar» էներգետիկ ընկերությունը: Այն վերջերս հարուցել է միջազգային հանրության ուշադրությունն իր խայտառակ ռազմատենչությամբ:

ԱԳ-ին պատկանող՝ Ջարգացման և համագործակցության վարչությունն (ՋՀՎ) աջակցում է Ադրբեջանին՝ տարեկան միլիոնների ներդրումներ կատարելով: Այդ կերպ շվեյցարացի հարկատուները նպաստում են «տեղական արվեստին ու մշակույթին», «կանանց՝ տնտեսապես ուժեղացմանը», «հանրային ծառայություններն ու կառավարումն ավելի լավ կատարելուն» և այլ շատ բաների: Չնայած Ադրբեջանը, որպես նավթարդյունահանող պետություն, հսկայական հարստություն է գեներացնում՝ այդ թվում Շվեյցարիա կատարած մատակարարումներով, սակայն դրանով սեփական ազգային տնտեսությունն ու քաղաքացիական հասարակությունը զարգացնելու փոխարեն փողը հոսում է ավազակապետության գրպանների մեջ և ներդրվում զենքեր ձեռք բերելու համար, որոնցով ներկայումս ավերվում է Լեռնային Ղարաբաղը: Նա, ով հրապարակայնորեն քննադատում է, լավագույն դեպքում կորչում է ճաղերի հետևում: Ադրբեջանում Շվեյցարիայի միջոցով իրականացվող «լավ կառավարման խթանման» արդյունքների մասին ոչինչ հայտնի չէ:

Ինչ վերաբերում է Ղարաբաղին, ապա Շվեյցարիայի ԱԳ-ն վարում է բովանդակային և հայեցակարգային այնպիսի քաղաքականություն, որը հաճելի է Ադրբեջանին: Բեռնում Ադրբեջանի դեսպանությունը պարբերաբար վկայակոչում է «Շվեյցարիայի հարգելի կառավարության դիրքորոշումը» («esteemed Swiss Government's position»)՝ դեպի Ղարաբաղ ուղևորությունները որպես Ադրբեջանի ինքնիշխանության հանդեպ «ոչ

բարեկամական գործողություն» որակելու համար: Ներկայիս պատերազմի մասին ԱԳ-ն նվաստացուցիչ կերպով զեկուցում է՝ (նոյեմբերի 9-ի դրությամբ). «Մարտական գործողությունները (...) պարբերաբար հանգեցնում են երկու կողմերում մահերի և վիրավորումների»: Իրականում, ադրբեջանա-թուրքական դաշինքի կողմից սեպտեմբերի 27-ին սանձազերծված՝ բնաջնջողական պատերազմն արդեն իսկ է հազարավոր կյանքեր, ավերել է ամբողջ շրջաններ, ֆոսֆորային ռումբերով այրել է անտառային տարածքներ և հողին հավասարեցրել բազմաթիվ բնակավայրեր:

Ընդհանուր առմամբ, պաշտոնական Շվեյցարիան ակնհայտ ջանասիրությամբ փորձում է Բաքվի կոռումպացված և ավտոկրատական ռեժիմի հեղինակությունը «փայլեցնել»: Տնտեսական սերտ համագործակցությունը պարտավոր չէ հարկադրաբար հանգեցնել հաճոյակատարության: Այն, ընդհակառակը, ամուր հիմք է ստեղծում՝ հանդես գալու հանուն ազատության և իրավապետական սկզբունքների:

Դաշնային խորհուրդը շուրջ երկու տարի առաջ կասեցրեց Թուրքիայի հետ Ազատ առևտրի համաձայնագիրը թուրքական բանակի՝ Սիրիա ներխուժելու պատճառով, ինչն ուժգին արտաքին քաղաքական ազդակ էր: Դրանից հետո Թուրքիան շարունակել է իր ագրեսիվ արտաքին քաղաքականությունը միջերկրածովյան շրջանում, իսկ այժմ՝ Հարավային Կովկասում: Այն պանթուրքիզմով բեռնավորված՝ նախագահ Էրդոհանի ներքո անցել է ամեն տեսակի չափ ու սահման: Իր աշխարհաքաղաքական նշանակությունը մեծացնելու համար այն խախտում է միջազգային համաձայնագրերը, ոտնահարում ծովային իրավունքը, հանդես է գալիս՝ որպես ռազմամոլ և ծաղրում եվրոպական ժողովրդավարությունները:

Հենց այժմ է Շվեյցարիան ցանկանում վավերացնել ազատ առևտրի համաձայնագիրը, մինչդեռ մյուս պետությունները քննարկում են տնտեսական պատժամիջոցներ կիրառելու հարցը: Քաղաքական և իմիջին նպաստող օգուտը Թուրքիայի համար անհամեմատ ավելի է, քան տնտեսական օգուտը Շվեյցարիայի համար: Որտեղի՞ց է գալիս այդ շտապողականությունը, այն դեպքում, երբ դեռ գարնանը Շվեյցարիայի ԱԳ-ն հայտարարեց, որ չի շտապում զբաղվել այդ գործարքով:

Ֆիլիպ Էզզեր

Պատմաբան, «Gebert-Rüf» հիմնադրամի նախկին տնօրեն, Հարավային Կովկասի փորձագետ և Լեռնային Ղարաբաղի Հարթաշեն բնակավայրի պատվավոր քաղաքացի:

Տպագրվել է «Neue Zürcher Zeitung»-ում, 11.11. 2020թ.